

ԳԱԼՈՒԲՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՆՊԱՍՏՆԵՐ

2020-ի ՉԵԿՈՅՑ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1956 թուականին սկսեալ աշխարհասփիռ հայ եւ հայագիտական ոլորտի ուսանողներու համալսարանական կրթաթոշակներ տրամադրելը եղած է Հայկական Համայնքներու Բաժանմունքի հիմնական գործունեութիւններէն մէկը:

2020-ի արդիւնքները կը վերաբերին հետեւեալ վեց կրթանպաստի ծրագիրներուն՝

1. **Հայագիտութեան կրթանպաստներ**
2. **Հայագիտութեան կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ**
3. **Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար**
4. **Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ**
5. **Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ**
6. **Արտակարգ կրթանպաստներ**

ՆԱԽԱՀԱՇԻԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ

1. Հայագիտութեան կրթանպաստներ

Կրթանպաստի այս ծրագիրը բաց է Հայագիտութեան մէջ մասնագիտացող ուսանողներու եւ հետազոտողներու, որոնք Master's, PhD, կամ Post Doc-ի կը հետեւին ճանչցուած որեւէ համալսարանի մէջ:

2020-ին, Բաժանմունքը ստացաւ 49 դիմում եւ 16 կրթանպաստ յատկացուց Հայաստանէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Յունաստանէն, Թուրքիայէն, Ռուսիայէն, Անգլիայէն եւ Միացեալ Նահանգներէն ուսանողներու: Կրթանպաստները տարեկան 3,000-էն 25,000 Եւրօ էին (յատկացուած առաւելագոյնը երեք տարուան համար): 2018-էն հինգ կրթաթոշակ տրոգուեցաւ իսկ 2019-էն՝ երեք կրթաթոշակ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ Հայագիտութեան յատկացուած կրթաթոշակներու 2020-ի ընդհանուր պատկերը՝

Հայագիտութեան կրթանպաստներ	Յատկացում (Եւրօ)	Քանակ
Նոր կրթանպաստներ	226,750	16
Նորոգուած կրթանպաստներ	111,000	8
ԸՆԴԱՄԵՆԸ	337,750	24



2. Հայագիտութեան կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ

Կրթանպաստի այս ծրագիրը հայագիտութեան ոլորտին մէջ աշխատող, ակադեմականներու, հետազոտողներու եւ ուսանողներու (Հայաստանէն դուրս) առիթը կ'ընծայէ մասնակցելու գիտաժողովներու, սեմինարներու, հետազոտական ճամբորդութիւններ կատարելու եւ ակտիւն:

2020-ին, Բաժանմունքը ստացաւ 60 դիմում եւ 25 նպաստ յատկացուց. ոմանք չկրցան նպաստը գործածել համաճարակին պատճառով:

Հինգ նոր կրթաթոշակ յատկացուեցաւ Pázmáni Péter կաթողիկէ համալսարանի մէջ Հայագիտութեան Master's-ի ուսանողներու, եւ հինգ կրթաթոշակ ալ նորոգուեցաւ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2020-ին յատկացուած «Հայագիտութեան համար կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ»-ու ընդհանուր պատկերը՝

Հայագիտութեան համար կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ	Յատկացում (ԵԼՐՕ)	Քանակ
Հայագիտութեան կարճաժամկետ դրամաշնորհներ	50,838	18
Pázmáni Péter կաթողիկէի համալսարանի Master's	38,000	10
ԸՆԴԱՄԵՆԸ	88,838	28

3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար

Կրթանպաստի այս ծրագիրը Հայաստանի մէջ ապրող ուսանողներու, երիտասարդ ակադեմականներու, եւ հետազոտողներու առիթը կ'ընծայէ կարճաժամկետ դասընթացներու եւ վրայատրաստումի ծրագիրներու հետեւելու, ինչպէս նաեւ միջազգային գիտաժողովներու եւ աշխատանոցներու ընթացքին իրենց աշխատութիւնները ներկայացնելու:

2020-ին, Բաժանմունքը ստացաւ 52 դիմում եւ համաճարակին պատճառով միայն 11 նպաստ յատկացուց Հայաստանի քաղաքացիներու որ արտերկրի մէջ գիտաժողովներու մասնակցին: Յատկացուած գումարները 736-ԷՆ 1,036 ԵԼՐՕյի միջեւ էին, իսկ ընդհանուր գումարը կազմեց՝ 10,298 ԵԼՐՕ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2020-ին յատկացուած «Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար» ծրագրին ընդհանուր պատկերը՝

Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	Յատկացում (ԵԼՐՕ)	Քանակ
Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ	10,298	11

4. Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ

Կրթանպաստի այս ծրագիրը զարգացող երկիրներու մէջ ապրող հայ ուսանողներու առիթը կ'ընծայէ համալսարանական կրթութիւն ստանալու՝ նախ-ընթացաւարտ մակարդակի համար:

2020-ին, Բաժանմունքը ստացավ 192 դիմում եւ 48 կրթանպաստ յատկացուց: Յատկացուած գումարները 1,000-Էն 4,000 Տոլարի միջեւ էին: 2020-ին Նախորդող տարիներուն յատկացուած 41 կրթաթոշակ նորոգուեցաւ:

Այս ծրագիրին զուգահեռ Լիբանանի համալսարաններուն մէջ «Յատուկ կրթութիւն» ուսանողներու ծրագիրին պարունակին մէջ 2019-Էն չորս կրթաթոշակ նորոգուեցաւ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2020-ին յատկացուած «Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ»-ու ընդհանուր պատկերը՝

Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ	Յատկացում (ԵԼԲ)	Քանակ
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նոր կրթանպաստներ	98,140	44
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նորոգուած կրթանպաստներ	118,806	41
Յատուկ կրթութեան ծրագիր Լիբանան – նորոգուած կրթանպաստներ	16,698	4
ԸՆԴԱՄԵՆԸ	233,644	89

5. Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ

2020-ին, Բաժանմունքը ստացավ հինգ դիմում եւ նպաստ յատկացուց բոլորին: Նախորդող տարիներէ 3 ուսանողի կրթանպաստը նորոգուեցաւ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2019-ին յատկացուած «Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ»-ի ընդհանուր պատկերը՝

Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	Յատկացում (ԵԼԲ)	Քանակ	Է.	Ա.
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նոր կրթանպաստներ	24,400	5	2	3
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նորոգուած կրթանպաստներ	13,720	3	3	0
ԸՆԴԱՄԵՆԸ	38,120	8	5	3

6. Արտակարգ կրթանպաստներ

2020-ին Բաժանմունքը դիմում չստացաւ:

Ասոնց առընթեր, Հայկական Բաժանմունքը համահովանաւորեց ծրագիր մը՝ փախստական ուսանողներու որոնք Միջին Արեւելքէն գացած են Հայաստան ուսանելու: Ծրագիրին համահովանաւորներն են՝ ՀԲԸՄ-ը, Սբ. Սարգիս հոգաբարձութիւնը եւ Հայաստանի Սփիւռքի Նախարարութիւնը: 2020-ին Բաժանմունքը 23,000 Տոլար յատկացուց:

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՏՈՒԵԱԼՆԵՐ

2020-ին Բաժանմունքը ստացաւ 358 դիմում. դիմողներուն 59%-ը կին էր իսկ 41%-ը տղամարդ: Դիմումներ ներկայացուեցան 26 երկիրներէ, անոնց 44%-ը Հայաստանէն էր, 18%-ը Լիբանանէն,



8%-ը Թուրքիայէն, 7%-ը ԱՄՆ-էն, իսկ մնացեալ 23%-ը 22 տարբեր երկիրներէ: Դիմողներուն 29%-ը նպաստ ստացաւ:

2020-ին Բաժանմունքը 104 նոր կրթանպաստ յատկացուց (տորոգումները ներառեալ՝ 165) (փախստականներու կրթանպաստի ծրագիրը չհաշուած), ընդհանուր 742,390 Եւրօ գումարի:

2020-ի կրթանպաստի ծրագիր	Յատկացում (Եւրօ)	Քանակ	Է.	Ա.
1. Հայագիտութեան կրթանպաստներ	337,750	24	12	12
2. Հայագիտութեան համար կարճաժամկետ դրամաշնորհներ	88,838	28	17	11
3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	10,298	11	6	5
4. Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ	233,644	89	61	28
5. Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	38,120	8	5	3
6. Արտակարգ կրթանպաստներ	0	0	0	0
Global Excellence կրթանպաստներ - կասեցուող	15,000	2	2	0
Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստի ծրագիր - կասեցուող	18,740	3	2	1
ԸՆԴԱՄԵՆԸ	742,390	165	105	60

2020-ին, նախորդող տարիներէ երկու նպաստառու ուսանող իր դոկտորականը պաշտպանեց: